# «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵ

**Հասցեատեր՝**
«Նոա ՖԱ» ՀԿ
Էլեկտրոնային փոստի հասցե՝ noah@noah.am

**«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության**

**Կարգապահական և էթիկայի կոմիտեի**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**29.05.2025թ.**

| | |
|---|---|
| Զեկուցող (անդամ) | Հենրիկ Խաչատրյան |
| Անդամներ | Դավիթ Բակլաչյան |
| | Արփի Լազարյան |
| | Նարեկ Ադամյան |

---

| | |
|---|---|
| **Վարույթ՝** | ՊԼ-158 |
| **Խախտում՝** | 1. Խաղի ժամանակահատվածում անվտանգության աշխատակիցների թերի աշխատանք կատարելը (Հավելված 1 Ա, 34-րդ կետ)<br>2. Խաղի ժամանակահատվածում երկրպագուների կողմից լազեր օգտագործելը (Հավելված 1 Ա, 26-րդ կետ)<br>3. «Նոա» թիմի գլխավոր մարզչի օգնական Անդրե Սենթոս Ֆրեիշիեիրունի (53912) կողմից մրցավարի հասցեին հայհոյանք հնչեցնելը (Հավելված 1 Բ, 17-րդ կետ) |
| **Առաջնություն՝** | Fastex Պրեմիեր Լիգա |
| **Խաղ՝** | «Նոա» - «Արարատ-Արմենիա», 24.05.2025թ. |

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն որոշեց՝

1. «Նոա ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի՝ 50,000 ՀՀ դրամի չափով։
2. «Նոա ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի՝ 50,000 ՀՀ դրամի չափով։
3. «Նոա» թիմի գլխավոր մարզչի օգնական Անդրե Սենթոս Ֆրեիշիեիրունին (53912) որակազրկել 2 (երկու) խաղով։ Որակազրկումը տարածվում է 2025 թվականի մայիսի 24-ից սկսած և ներառում է արդեն իսկ բաց թողնված խաղ(եր)ը (այդպիսիք լինելու դեպքում)։ «Նոա ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի՝ 100,000 ՀՀ դրամի չափով։

**ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նիստը նախագահող՝**

**Հենրիկ Խաչատրյան**

Ծանուցում

- ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման համար որոշմամբ պատասխանատվության միջոցի ենթարկված ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնի Կարգապահական գրասենյակ (disciplinary@ffa.am էլեկտրոնային հասցեով)՝ ի գիտություն Բողոքարկման կոմիտեին, համապատասխան որոշման մասին ծանուցվելուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում:
- Որոշմամբ հիմքերի տրամադրման համար համապատասխան Ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման հայտարարություն ներկայացնելու հետ միասին ներկայացնի որոշման հիմքերը պատվիրելու համար նախատեսված 50,000 ՀՀ դրամի չափով տուրքի վճարումը հավաստող ապացույց: Նշված վճարը վերադարձման ենթակա չէ:
- Բողոքարկման հայտարարությունը ներկայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում (այն դեպքում, երբ Ֆուտբոլային սուբյեկտը դիմել է որոշման հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 5-օրյա ժամկետը սկսում է հաշվարկվել այդ հիմքերը ստանալու պահից) Ֆուտբոլային սուբյեկտը նույն կարգով պետք է ներկայացնի հիմնավորված բողոքը, ինչպես նաև բողոքի ներկայացման համար նախատեսված համապատասխան տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցը: Բողոքարկման վճարը կազմում է 100,000 ՀՀ դրամ և ենթակա է վերադարձման յուրաքանչյուր դեպքում ԲԿ որոշմամբ սահմանված չափով՝ ըստ բավարարված պահանջների համամասնության:
- Նշված ժամկետներում բողոքարկման գրավոր հայտարարություն չներկայացնելը հանգեցնում է որոշման վերջնական և պարտադիր դառնալուն, և համարվում է, որ կողմը հրաժարվել է բողոք ներկայացնելու իր իրավունքից: